

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 37/3

22 սեպտեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Հորմիգոնես Ի Մորտերոս Սեռոանո Ս.Լ.» Հայաստանյան մասնաճյուղի 28.08.2015 թ-ի բողոքը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 21.08.2015 թ-ի թիվ 80 որոշման դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով «Հորմիգոնես Ի Մորտերոս Սեռոանո Ս.Լ.» Հայաստանյան մասնաճյուղի (այսուհետ նաև Մասնաճյուղ) վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 18.08.2015 թ-ի դրությամբ Մասնաճյուղի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են ընդամենը 88.437.924 դրամ: Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 21.08.2015 թ-ին ընդունվել է թիվ 80 որոշումը Մասնաճյուղից 88.437.924 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Նշվեց նաև, որ Մասնաճյուղի տնօրինության կողմից առանձնապես խոշոր չափերով հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու դեպքի առթիվ ՀՀ քննչական վարչության կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով 27.08.2015 թ-ին հարուցվել է թիվ 83161515 քրեական գործը, որի շրջանակներում կատարվում է նախաքննություն:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում, հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել և քննվում է թիվ 83161515 քրեական գործը, հետևապես անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև քրեական դատավարության կարգով որոշում կայացնելը:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ Մասնաճյուղի բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

«Հորմիգոնես Ի Մորտերոս Սեռոանո Ս.Լ.» Հայաստանյան մասնաճյուղի 28.08.2015 թ-ի բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ